ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀՄԱԱՇՁԲ-2022/14Շ

ք. Երևան «14» 07 2022 թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա.Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՎՄՎ Քամփնի» ՍՊԸ ի դեմս տնօրեն Շ. Խալոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Մ-2, (Սյունիք) /Մ-2/ - Աղվանի – Տաթև - /Մ-2/ միջպետական նշանակության ավտոճանապարհի Վերին Խոտանանը շրջանցող ճանապարհահատվածի կառուցման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 150 օր հետո ,բայց ոչ ուշ, քան նոյեմբերի 30 թ.**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 **Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել** անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **1 (մեկ) տարին** :Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **18 աշխատանքային օրվա ընթացքում** Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

Աշխատանքները ընդունվում են երկու փուլով հետևյալ ընթացակարգով.

(1-ին փուլի աշխատանքներն են՝ սույն պայմանագրով նախատեսված Մ-2, (Սյունիք) /Մ-2/ - Աղվանի – Տաթև /Մ-2/ միջպետական նշանակության ավտոճանապարհի Վերին Խոտանանը շրջանցող (11,040 կմ) ճանապարհահատվածի 0+000 կմ-ից 5+500 կմ հատվածի մասով աշխատանքային նախագծով նախատեսված աշխատանքների ամբողջությամբ կատարելն է, իսկ 2-րդ փուլի աշխատանքներն են՝ վերը նշված ճանապարհահատվածի 5+500 կմ-ից 11+040 կմ հատվածի մասով աշխատանքային նախագծով նախատեսված աշխատանքների ամբողջությամբ կատարելն է)

1) կապալառուի կողմից շինարարության առաջին փուլի ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու՝ 1-ին և 2-րդ փուլերի միջանկյալ և կատարված աշխատանքներն ամբողջությամբ ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշմանը համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է յուրաքանչյուր փուլի կատարված աշխատանքներ և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի միջանկյալ ակտ, իսկ աշխատանքները ամբողջովին ընդունելու դեպքում՝ շահագործման ընդունող հանձնաժողովի հիմնական ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված յուրաքանչյուր ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի կամ ըստ փուլերի կատարված աշխատանքների համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման միջանկյալ արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում 2 392 148 431 (երկու միլիարդ երեք հարյուր իննսուներկու միլիոն մեկ հարյուր քառասունութ հազար չորս հարյուր երեսունմեկ) ՀՀ դրամ, որից 398 691 405 (երեք հարյուր իննսունութ միլիոն վեց հարյուր իննսունմեկ հազար չորս հարյուր հինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 717 644 000 (յոթ հարյուր տասնյոթ միլիոն վեց հարյուր քառասունչորս միլիոն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[28.1]:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և	«ՎՄՎ Քամփնի» ՍՊԸ
ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ, Գեղարքունիքի մարզ. Լիճք
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	«ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ-ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ կենտրոնական գանձապետարան	ՀՀ 220193335431000
ՀՀ 900011025823	ՀՎՀՀ 08422964
ՀՎՀՀ 02815457	տնօրեն
գլխավոր քարտուղար	Շ. Խաչոյան
Ա. Երիցյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«14» «04» 2022 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱԱՇՁԲ-2022/14Շ ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՉԱՓԱԲԱԺԻՆ 1

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մ-2, (Սյունիք) /Մ-2/ - Աղվանի – Տաթև - /Մ-2/ միջպետական նշանակության ավտոճանապարհի Վերին Խոտանանը շրջանցող ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների

/ՀՀ հազ. դրամ/

NN	Աշխատանքների անվանումը	Չափ. միավոր	Ծավալը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	I. Հողային աշխատանքներ				
1	20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	43029	2,285	98 325,568
2	20б-VIII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	44189	3,185	140 746,384
3	9д-V կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	14644,5	1,706	24 976,195
4	13-V կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	91287	1,706	155 689,979
5	Նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ³	38727	2,908	112 614,243
6	Նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 50մ կուտակում, բարձում ա/ի էքս. 1.25մ³ շ.տ. տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ³	4302	3,980	17 121,100
7	Նախապես փխրեցված 20б-VIII կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ³	39771	2,908	115 650,091
8	Նախապես փխրեցված 20б-VIII կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 50մ կուտակում, բարձում ա/ի էքս. 1.25մ³ շ.տ. տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ³	4418	3,980	17 582,756
9	Նախապես փխրեցված 9д-V կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ³	6203	2,427	15 056,542
10	Նախապես փխրեցված 9д-V կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 50մ կուտակում, բարձում ա/ի էքս. 1.25մ³ շ.տ. տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ³	689	3,499	2 410,949
11	Նախապես փխրեցված 9д-V կարգի բնահողի մշակում բուլդոզերով տեղափոխում 50մ լիցք (հարթում, ջրում, խտացում)	մ³	6097	1,688	10 294,175
12	Նախապես փխրեցված 9д-V կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 1կմ (հարթում, ջրում, խտացում)	մ³	16300	2,199	35 838,810

13	Նախապես փխրեցված 13-V կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ³	143199	2,366	338 823,154
14	Նախապես փխրեցված 13-V կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 50մ կուտակում, բարձում ա/ի էքս. 1.25մ³ շ.տ. տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ³	15911	3,438	54 702,018
15	Նախապես փխրեցված 13-V կարգի բնահողի մշակում բուլդոզերով տեղափոխում 50մ լիցք (հարթում, ջրում, խտացում)	մ³	2406	1,689	4 064,456
16	Նախապես փխրեցված 13-V կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 1կմ (հարթում, ջրում, խտացում)	մ³	15785	2,168	34 223,459
17	Նախապես փխրեցված 13-V կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 2կմ (հարթում, ջրում, խտացում)	մ³	5273	2,305	12 153,738
18	10з-V կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ³	191810	2,427	465 580,413
19	10з-V կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 50մ կուտակում, բարձում ա/ի էքս. 1.25մ³ շ.տ. տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ³	21312	3,499	74 574,950
20	10з-V կարգի բնահողի մշակում բուլդոզերով տեղափոխում 50մ լիցք (հարթում, ջրում, խտացում)	մ³	11073	1,947	21 555,809
21	10з-V կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 1կմ (հարթում, ջրում, խտացում)	մ³	15173	2,456	37 266,405
22	10з-V կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 2կմ (հարթում, ջրում, խտացում)	մ³	28563	2,599	74 240,950
23	10з-V կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 3կմ (հարթում, ջրում, խտացում)	մ³	5236	2,741	14 349,258
24	33г-III կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ³	182059	1,829	332 949,499
25	33г-III կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 50մ կուտակում, բարձում ա/ի էքս. 1.25մ3 շ.տ. տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ³	20228	2,323	46 987,621
26	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ³	1492	2,038	3 040,099
27	10e-IV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 50մ կուտակում, բարձում ա/ի էքս. 1.25մ3 շ.տ. տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ³	165	2,442	402,881
28	10eIV կարգի բնահողի մշակում բուլդոզերով տեղափոխում 50մ լիցք (հարթում, ջրում, խտացում)	մ³	1839	1,481	2 724,295
29	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 1կմ (հարթում, ջրում, խտացում)	մ³	19666	2,224	43 735,217
30	10ᵉ-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.25 մ³ շ. տ. բարձում ա/ի տեղափոխում մինչև 1կմ, կուտակում խողովակների հետաղարձ լիցքի համար	մ³	387	1,350	522,450
31	10ᵉ-IV կարգի բնահողի մշակում էքս. 2.5 մ³ շ. տ. բարձում ա/ի տեղափոխում մինչև 1կմ, կուտակում կողնակների լիցքի համար	մ³	8556	1,350	11 550,600
	Աստիճանների կառուցում				
1	13-V կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	392,5	1,706	669,409
2	9д-V կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ³	1558	1,706	2 657,169
3	Աստիճանների կառուցում նախապես փխրեցված 13-V կարգի բնահողում բուլդոզերով (տեղափոխում մինչև 20մ)	մ³	785	0,568	445,802

4	Աստիճանների կառուցում նախապես փխրեցված 9դ-V կարգի բնահողում բուլդոզերով (տեղափոխում մինչև 20մ)	մ³	3116	0,568	1 769,576
5	Աստիճանների կառուցում 10з-V կարգի բնահողում բուլդոզերով (տեղափոխում մինչև 20մ)	մ³	2398	0,568	1 361,824
6	Աստիճանների կառուցում 10e-IV կարգի բնահողում բուլդոզերով (տեղափոխում մինչև 20մ)	մ³	1129	0,272	306,862
7	Աստիճանների կառուցում 33r-III կարգի բնահողում բուլդոզերով (տեղափոխում մինչև 20մ)	մ³	622	0,251	156,184
				Ընդամենը I	2 327 120,888
	II. Կողային առուներ				
1	20a-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h<0.5մ,	մ³	403	6,352	2 559,937
2	20б-VIII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h<0.5մ,	մ³	453	10,638	4 819,014
3	9դ-V կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h<0.5մ,	մ³	65	4,840	314,613
4	13-V կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h<0.5մ,	մ³	2660,5	4,840	12 877,352
5	Կողային առուների իրականացում նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողում էքս 0.65մ³ շ.տ., բարձում տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ³	363	3,542	1 285,891
6	Կողային առուների իրականացում նախապես փխրեցված 20a-VII կարգի բնահողում ձեռքով, բարձում էքս 0.65մ3 շ.տ. տեղափոխում լցակույտ 6կմ միջին հեռ.	մ³	40	14,036	561,456
7	Կողային առուների իրականացում նախապես փխրեցված 20б-VIII կարգի բնահողում էքս 0.65մ³ շ.տ., բարձում տեղափոխում լցակույտ 6կմ միջին հեռ	մ³	408	3,542	1 445,299
8	Կողային առուների իրականացում նախապես փխրեցված 20б-VIII կարգի բնահողում ձեռքով, բարձում էքս 0.65մ3 շ.տ. տեղափոխում լցակույտ 6կմ միջին հեռ.	մ³	45	17,889	805,019
9	Կողային առուների իրականացում նախապես փխրեցված 9դ-V կարգի բնահողում էքս 0.65մ³ շ.տ., բարձում տեղափոխում լցակույտ 6կմ միջին հեռ	մ³	117	2,946	344,647
10	Կողային առուների իրականացում նախապես փխրեցված 9դ-V կարգի բնահողում ձեռքով, բարձում էքս 0.65մ3 շ.տ տեղափոխում լցակույտ 6կմ միջին հեռ.	մ³	13	13,440	174,716
11	Կողային առուների իրականացում նախապես փխրեցված 13-V կարգի բնահողում էքս 0.65մ³ շ.տ., բարձում տեղափոխում լցակույտ 6կմ միջին հեռ	մ³	4789	2,885	13 813,871
12	Կողային առուների իրականացում նախապես փխրեցված 13-V կարգի բնահողում ձեռքով, բարձում էքս 0.65մ3 շ.տ տեղափոխում լցակույտ 6կմ միջին հեռ.	մ³	532	13,379	7 117,362
13	Կողային առուների իրականացում 10з-V կարգի բնահողում էքս 0.65մ³ շ.տ., բարձում տեղափոխում լցակույտ 6կմ միջին հեռ	մ³	2734	2,946	8 053,544
14	Կողային առուների իրականացում 10з-V կարգի բնահողում ձեռքով, բարձում էքս 0.65մ3 շ.տ տեղափոխում լցակույտ 6կմ միջին հեռ.	մ³	303	13,440	4 072,229
15	Կողային առուների իրականացում 10e-IV կարգի բնահողում էքս 0.65մ³ շ.տ., բարձում տեղափոխում լցակույտ 6կմ միջին հեռ	մ³	752	2,372	1 783,368
16	Կողային առուների իրականացում 10e-IV կարգի բնահողում ձեռքով, բարձում էքս 0.65մ3 շ.տ տեղափոխում լցակույտ 6կմ միջին հեռ.	մ³	83	7,709	639,806

17	Կողային առուների իրականացում 33r-III կարգի բնահողում էքս 0.65մ³ շ.տ., բարձում տեղափոխում լցակույտ 6կմ միջին հեռ	մ³	1620	2,125	3 442,338
18	Կողային առուների իրականացում 33r-III կարգի բնահողում ձեռքով, բարձում էքս 0.65մ3 շ.տ տեղափոխում լցակույտ 6կմ միջին հեռ.	մ³	180	5,095	917,082
				Ընդամենը II	65 027,543
				Ընդհանուրը (հազար դրամ)	2 392 148,431

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՎՄՎ Քամփնի» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ. Լիճք
«ԱԿԲԱ ԿՐՈՂԻՏ-ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 220193335431000
ՀՎՀՀ 08422964
տնօրեն
Շ. Խաչատրյան

ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«14» «04» 2022 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱԱՇՁԲ-2022/14Շ ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅԱՑԻՆ ԳՐԱՖԻԿ

Մ-2, (Սյունիք) /Մ-2/ - Աղվանի – Տաթև - /Մ-2/ միջպետական նշանակության ավտոճանապարհի Վերին Խոտանանը շրջանցող ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Լաբորատոր փորձարկումներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 150 օր
2	Հողային աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 130 օր
3	Աստիճանների կառուցում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 140օր
4	Կողային առուներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 150օր հետո
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 150 օր հետո ,բայց ոչ ուշ, քան նոյեմբերի 30-ը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՎՄՎ Քամփնի» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ. Լիճք
«ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ-ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 220193335431000
ՀՎՀՀ 08422964
տնօրեն
Շ. Խալոյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«14» «07» 2022 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱԱՇՁԲ-2022/14Շ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177/38	Մ-2, (Սյունիք) /Մ-2/ - Աղվանի – Տաթև - /Մ-2/ միջպետական նշանակության ավտոճանապարհի Վերին Խոտանանը շրջանցող ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների	-	-	-	-	-	-	1 435 289 058	1 435 289 058	1 435 289 058	2 392 148 431	2 392 148 431	2 392 148 431	2 392 148 431

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

ստորագրություն
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՎՄՎ Քամփնի» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ. Լիճք
«ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ-ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 220193335431000
ՀՎՀՀ 08422964
տնօրեն
Շ. Խալոյան

ստորագրություն
Կ.Տ.

Հավելված թիվ 1
« » « » 2022 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱՇՁԲ-2022/14Շ *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » « » 2022 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱՄՇՁԲ-2022/14Շ *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն